

20 փետրվարի, 2023

HSBC Հայաստանը՝ «Շուկայի առաջատար» և «Լավագույն ծառայություններ մատուցող բանկ» առևտրի ֆինանսավորման ոլորտում

Հեղինակավոր «Euromoney» ամսագրի 2023թ.-ի հարցման արդյունքում «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին (այսուհետ՝ HSBC Հայաստան/Բանկ) շնորհվել է երկու մրցանակ առևտրի ֆինանսավորման ոլորտում՝ «Շուկայի առաջատար» և «Լավագույն ծառայություններ մատուցող բանկ»:

HSBC Խումբը ևս արժանացել է մրցանակի՝ արդեն վեցերորդ տարին անընդմեջ ճանաչվելով առևտրի ֆինանսավորման ոլորտում «Շուկայի առաջատար» աշխարհում:

«Euromoney» առաջատար պարբերականի իրականացում է ամենամյա հարցումներ ֆինանսական կազմակերպությունների հաճախորդների շրջանում, որոնք միտված են բացահայտելու առևտրի ֆինանսավորման ոլորտում ծառայություններ մատուցող առաջատար կազմակերպությունները:

Նշենք, որ Բանկը համարվել է «Շուկայի առաջատար» արդեն երրորդ տարին անընդմեջ, իսկ «Լավագույն ծառայություններ մատուցող բանկ»՝ երկրորդ տարին անընդմեջ:

Մեկնաբանելով հարցման արդյունքները՝ HSBC Հայաստանի առևտրի ֆինանսավորման վարչության ղեկավար Արտակ Պետրոսյանը նշում է. «Մեզ համար այս մրցանակներն առանձնահատուկ նշանակություն ունեն, քանի որ շնորհվում են հաճախորդների գնահատականի հիման վրա: Ուստի, ցանկանում են շնորհակալություն հայտնել մեր հաճախորդներին իրենց բիզնես ուղին մեզ հետ անցնելու և մեզ բարձր գնահատականի արժանացնելու համար:

Այս մրցանակներն ապացուցում են, որ HSBC-ն ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում պահպանում են առևտրի ֆինանսավորման ոլորտում առաջատար դիրքերը: HSBC Հայաստանը շարունակում է կատարելագործել առևտրի ֆինանսավորման պրոդուկտները և զարգացնել հաճախորդներին առաջարկվող ծառայությունները՝ յուրահատուկ կամուրջ հանդիսանալով աշխարհի ամենատարբեր երկրներում գործող բիզնեսների համար»:

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ն՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 63 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2022թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել են 2,992 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հիմնադրվել է 1996թ.-ին: Բանկը Էյչ-Էս-Բի-Սի Խմբին ամբողջությամբ պատկանող դուստր ընկերություն է: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի երևան քաղաքում գտնվող իր 6 գրասենյակի և մոտ 310 աշխատակցի միջոցով: 2022 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 321 միլիարդ ՀՀ դրամ՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲԸ-ի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը: Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: